


L. ՏԱԼՈՒԹՈՅ



ԱՌԱԿՆԵՐ

891.71.05
Դ-80

ՊԵՏՐՈՎ

891-710
m-20

L. SULUSUZ

30 MAY 2011

ԱՌԱԿՆԵՐ

Նկարները Կ. ՌՈՒԴՈՎՈՎԸ

Թարգմ. Մ. ԿՈՐՅՈՒՆ



ՊԵՏՀԱՍ
ՀԼԿՑԵՇ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԿԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵԿԱՆ
1938



ԲԱԴՆ ՈՒ ԼՈՒՍԻՆԸ

Մի բադ ամբողջ որը լողում եր գետում, ձուկ վորոնում, բայց վոչ մի ձուկ չկարողացավ գտնել: Յերբ զիշերը վրա հասավ, բադը ջրում տեսավ լուսնին, կարծեց թե ձուկ ե և սուզվեց ջրի մեջ, վոր լուսնին բռնի: Մյուս բադերը տեսան այս և սկսեցին ծիծաղել նրա վրա:

Բադն այնքան ամաչեց, վոր դրանից հետո եր յերբ ջրի մեջ ձուկ եր տեսնում, չեր վորսում և այսպիսով նա սովոր սատկեց:



59203-66

*

ՄՈԾԱԿՆ ՈՒ ԱՌՅՈՒԾԸ

Մոծակը թռավ առյուծի մոտ և ասաց.

— Դու կարծում ես թե ինձանից ուժեղ
ես, ինչպես չե, ինչ ուժ ունես վոր: Յեվ
ինչ ես յեղունզներով ճանգռոտում և ատամ-
ներդ կրծտացնում կռվարար պառավի պես:
Յես քեզանից ուժեղ եմ. չես հավատում, յեկ
կռվենք:

Յեվ մոծակը տղղաց ու սկսեց կծոտել
առյուծի քիթն ու մերկ այտերը: Առյուծն
սկսեց թաթերով խփել իր յերեսին և մա-
զիլներով ճանգռոտել: Իր ամբողջ յերեսը
ճանգռոտեց, արյունլվիկ արավ և ուժասպառ
յեղավ:

Մոծակն ուրախությունից տղղաց և թռավ
գնաց: Հետո նա խճճվեց սարդի վոստայնում,
սարդն սկսեց ծծել նրա արյունը: Մոծակը
մտածեց ինքնիրեն:

— Ամենահզոր առյուծին հաղթեցի, բայց
հաղթվում եմ այս անպիտան ճանձից:





ՇՈՒՆՆ ՈՒ ԻՐ ՍՏՎԵՐԸ

Մի կտոր միս բերանն առած՝ շունն անց-
նում եր գետակի վրա զցված գերանով։ Իր
պատկերը տեսնելով ջրում, նա կարծեց, թե
այնտեղ մի ուրիշ շուն կա մսի կտորը բե-
րանին, նա ցած զցեց իր բերանի միսը և
հարձակվեց նրանից միսը խլելու։ բայց այն-
տեղ վոչ մի միս ել չկար և իր ունեցած
միսն ել ջուրը տարավ և շունը մնաց առանց
մսի։

*



ԿԱՊԻԿՆ ՈՒ ՍԻՍԵՌԸ

Կապիկը յերկու լիքը բուռ սիսեռ եր
տանում։ Հանկարծ մի սիսեռ ցած ընկավ։
Կապիկն ուզեց ընկած սիսեռը վերցնել, բայց
քսան սիսեռ թափեց։ Նա վրա պրծավ հա-
վաքելու, բայց շաղ տվեց ամբողջը։ Այն ժա-
մանակ նա բարկացավ, ցրիվ տվեց ամբողջ
սիսեռն ու փախավ։

*

ՅԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ

Անտառով անցնում եյին յերկու ընկեր.
հանկարծ նրանց դիմացն յելավ մի արջ։ Ըն-
կերներից մեկը փախավ, ծառը բարձրացավ,
իսկ մյուսը մնաց ճանապարհին։ Հնար չկար—
պառկեց գետնի վրա ու մեռած ձևացավ։

Արջը մոտենալով նրան սկսեց հոտոտել,
մարդը շնչելուց ել դադարեց։

Արջը հոտոտեց նրա յերեսը, կարծեց թե
մեռած ե և հեռացավ։

Յերք արջը գնաց, մյուս ընկերը ցած
իջավ ծառից, սկսեց ծիծաղել ու հարցրեց.

— Հը, արջն ի՞նչ ասաց ականջիղ։

Ընկերը պատասխանեց,
— Արջն ինձ ասաց, թե վատ են այն
մարդիկ, վորոնք վտանգի ժամանակ իրենց
ընկերոջը թողնում, փախչում են։





ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐՏԵՐԸ

Մի անգամ նապաստակները հավաքվեցին
և սկսեցին գանգատվել իրենց կյանքից.

— Բոլորը մեզ վոչնչացնում են, և մարդիկ, և շները, և արծիվներն ու մյուսները։
Սվելի լավ ե միանգամից մեռնելը. յեկեք
գնանք ջուրը թափվենք, խեղղվենք։

Յեվ նապաստակները վազեցին դեպի լիճը՝
խեղղվելու։ Ափին նստած գորտերը տեսնելով նապաստակներին՝ վախեցան ու ջուրը թափվեցին։ Այս տեսնելով մի նապաստակ ասաց.

— Սպասեցեք, տղերք, ջուրը միք թափվի, տեսեք, գորտերի կյանքը մերինից ել վատե, նրանք մեղանից ել են վախենում։

★



ՄՈՒԿՆ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՏԱԿ

Շտեմարանի տակ մի մուկ եր ապրում։
Շտեմարանի հատակին մի փոքրիկ անցք կար,
վորտեղից ցորենի հատիկներ ելին ցած թափ-
վում։ Մկնիկը լավ եր ապրում, բայց նա
ուզեց իր ընկերների մոտ պարձենալ իր ապ-
րուստով։ Կրծելով անցքը լայնացրեց և հյուր
կանչեց իր ընկեր մկներին։

— Յեկեք ինձ մոտ, ասաց նա, յես ձեզ
կհյուրասիրեմ։ Բոլորիդ համար ել ուտելիք
կլինի։

Յերբ նա իր ընկեր մկներին տուն բերեց,
տեսավ, վոր վոչ մի անցք ել չկար։ Շտե-
մարանի տերը նկատելով հատակի մեծ անցքը՝
փակել եր այն։

★



ՅԵՂՋԵՐՈՒՆ

ՅԵՂՋԵՐՈՒՆ մոտեցավ գետին ջուր խմելու,
ջրում տեսավ իրեն, հիացավ իր մեծ ու
փարթամ յեղջուրներով։ Ապա նայելով վոտ-
քերին՝ ասաց. միայն վոտքերս են նիհար և
տգեղ։ Հանկարծ դուրս պրծավ մի առյուծ
ու հարձակվեց նրա վրա։ ՅԵՂՋԵՐՈՒՆ սլա-
ցավ արձակ դաշտերով։ Նա արդեն հեռանում
էր, բայց յերբ հասավ անտառ, յեղջուրները
խճճվեցին ծառերի ճյուղերի մեջ և առ-
յուծը բռնեց նրան։ Մեռնելու ըովեյին յեղ-
ջերուն ասաց.

— Այ թե ինչ հիմարն եմ յես. ինչ վոր վատ
ու բարակ եյի համարում, նրանք փրկում
եյին ինձ, իսկ ինչ վոր ինձ ուրախացնում
եր, նա իմ մահվան պատճառը յեղավ։

★



ԱՂՎԵՍԸ

Աղվեսը թակարդն ընկավ, պոչը պոկվեց
և նա փախավ և սկսեց մտածել թե ի՞նչ
ձեվով ծածկի իր այդ խայտառակությունը։
Նա հավաքեց աղվեսներին և սկսեց համո-
զել նրանց, վոր իրենց պոչերը կտրեն։

— Ինչներիս ե պետք պոչը, — ասում ե,
— ավելորդ բեռ ե մեզ, ուրիշ վոչինչ։

Այն ժամանակ մի աղվես ասաց.

— Այս, անպիտան, դու այդ չեյիր ասի,
յեթե պոչդ տեղը լիներ։ Պոչատ աղվեսը լոեց
ու հեռացավ։

★



ԹՈՒԽՍՆ ՈՒ ՃՈՒՏԵՐԸ

Թուխսը ճուտեր հանեց, բայց չեր իմանում՝ վոնց պաշտպանի նրանց։ Յեվ ահա նա նրանց ասաց։

— Նորից մտեք կճեպի մեջ, յես առաջվապես թևերիս տակ կառնեմ ձեզ և կպաշտպանեմ։

Ճուտերը լսեցին և փորձեցին մտնել կճեպի մեջ, բայց վոչ մի կերպ չկարողացան տեղափորվել և միայն իրենց թևերը տրորեցին։ Այդ ժամանակ մի ճուտ ասաց մորը։

— Յեթե մենք պիտի միշտ կճեպի մեջ մնայինք, ավելի լավ կլիներ մեզ ձվից հանած չլինելիր։



ԱԳՈԱՎՆ ՈՒ ԱՂԱՎՆԻՆԵՐԸ

Ագռավը տեսավ, վոր աղավնիներին լավ են կերակրում, իրեն սպիտակացրեց և մտավ աղավնանոց։ Աղավնիները սկզբում կարծեցին, թե նա իրենց պես մի աղավի յե, ներս թողեցին։ Բայց ագռավը մոռացավ, վոր իրեն աղավի պիտի ձեվացներ, և ձայնովը մեկ կռավեց։ Այն ժամանակ աղավնիները կտցահարելով քշեցին նրան։ Ագռավը թոավ իր ընկերների մոտ, բայց ագռավներն ել վախեցան նրանից, վորովհետև նա սպիտակ երև և նույնպես քշեցին։



Հեղական խմբադիր՝ Հ. Հարությունյան
Տել. Խմբադիր՝ Ան. Գասպարյան
Սըբագրիչ՝ Ա. Արդաքանյան
Կոնտրոլ սրբազրիչ՝ Յե. Տել. Մինասյան



Պատվիրտի լիազոր՝ Դ-3528. Հրատ. № 4467.

Գատվեր 104. Տիրաժ 4000.

Բուղթ 62×94. Տպագր. 1 մամ.

Մեկ մամ 17.280 նշան. Հեղինակ. 1½ մամ.

Հանձնված է արտադրության 27 հունվարի, 1938 թ.

Ստորագրված է տպագրության համար 25 մարտի 1938 թ.

Գին 50 կ.

Գետիրատի 1 տպարան, Յերևան, Հենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0395321

5356

380

ԳԻՒԸ 50 4.

380
322
BL

807

այս

Ա. Բ. 1

807 1

Л. ТОЛСТОЙ
БАСНИ

ГИЭ АРМ. ССР, ЕРЕВАН